Հայաստանի Հանրապետության քաղաքացի երեխան, որի նկատմամբ նշանակված է Հայաստանի Հանրապետության քաղաքացիների խնամակալություն կամ հոգաբարձություն, պահպանում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը՝ անկախ նրա ծնողների կողմից Հայաստանի Հանրապետության քաղաքացիության դադարեցման հանգամանքից: Երեխայի Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցվում է ծնողների համաձայնության դեպքում, եթե նրանք զրկված չեն ծնողական իրավունքից:

ԳԼՈՒԽ 3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

ՀՈԴՎԱԾ 23. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ (ԿՈՐՑՄԱՆ) ՀԻՄՔԵՐԸ

Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցվում (կորցվում) է՝

1) Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը փոխելու դեպքում.

2) Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից դուրս գալու դեպքում.

3) Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված հիմքերով.

4) սույն օրենքով նախատեսված այլ հիմքերով:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ՀՈԴՎԱԾ 24. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԱՎԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՒՆԵԼԸ

1. Հայաստանի Հանրապետության 18 տարին լրացած յուրաքանչյուր քաղաքացի իրավունք ունի փոխել քաղաքացիությունը՝ դուրս գալ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից և ձեռք բերել այլ պետության քաղաքացիություն:

2. Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը փոխելու մասին քաղաքացու դիմումը մերժվում է, եթե՝

1) նրա նկատմամբ հարուցված է քրեական հետապնդում.

2) նրա նկատմամբ կա դատարանի օրինական ուժի մեջ մտած և կատարման ենթակա դատավճիռ կամ վճիռ.

3) Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը փոխելը հակասում է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության շահերին.

4) նա ունի պետության, կազմակերպությունների կամ քաղաքացիների շահերի հետ կապված չկատարած պարտավորություններ:

ՀՈԴՎԱԾ 25. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԱՎԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼԸ

1. Հայաստանի Հանրապետության 18 տարին լրացած յուրաքանչյուր երկքաղաքացի իրավունք ունի դուրս գալ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից:

2. Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից դուրս գալու մասին դիմումը մերժվում է, սույն օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հիմքերով:

ՀՈԴՎԱԾ 26. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԱՎԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԶԵՌՔ ԲԵՐՄԱՆ ՍԱՍԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԸ ՉԵՂՅԱԼ ՃԱՆԱՉԵԼԸ

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիության ձեռքբերման մասին իրավական ակտը չեղյալ է ճանաչվում, եթե այն կայացվել է կեղծ տվյալների կամ կեղծ փաստաթղթերի հիման վրա:

2. Երեխայի, որի ծնողների կամ ծնողներից մեկի քաղաքացիության ձեռքբերման մասին որոշումը չեղյալ է ճանաչվել, քաղաքացիության ձեռքբերման մասին որոշումը չեղյալ չի ճանաչվում, եթե նա չգիտեր և չէր կարող իմանալ ներկայացված տվյալների կամ փաստաթղթերի կեղծ լինելու հանգամանքի մասին, կամ եթե դրա արդյունքում նա դառնում է քաղաքացիություն չունեցող անձ:

3. Քաղաքացիության ձեռքբերման մասին որոշումը չեղյալ ճանաչելը անձին չի ազատում օրենքով սահմանված պատասխանատվությունից:

ՀՈԴՎԱԾ 27. ԵՐԵՒԱՅԻ ԶԱՎԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԱՎԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՎԵԼՈՒ ԴԵՊՐՈՒՄ

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցված ծնողների մինչև տասնչորս տարեկան երեխայի Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցվում է՝ ծնողների համաձայնությամբ:

2. Եթե ծնողներից մեկի Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցվել է, իսկ մյուսը Հայաստանի Հանրապետության քաղաքացի է, նրանց մինչև տասնչորս տարեկան երեխայի Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցվում է, եթե՝

- 1) առկա է ծնողների համաձայնությունը.
- 2) երեխան մշտապես բնակվում է Հայաստանի Հանրապետությունից դուրս, և առկա է Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող ծնողի համաձայնությունը:

ՀՈԴՎԱԾ 28. ԵՐԵՒԱՆԵՐԻ ՀԱՍԱԶԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՆՐԱՆՑ ԶԱՎԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՎԵԼՈՒ ԴԵՊՐՈՒՄ

Ծնողների քաղաքացիությունը դադարեցվելու դեպքում 14-ից 18 տարեկան երեխաների քաղաքացիությունը դադարեցվում է սույն օրենքով սահմանված կարգով՝ երեխաների համաձայնության առկայության դեպքում:

ԳԼՈՒԽ 4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԱՎԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՄԱՐՍԻՆՆԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 29. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱ ԽԱԳԱՀԸ

Հայաստանի Հանրապետության Նախագահն իր հրամանագրով լուծում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու, Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը վերականգնելու, Հայաստանի Հանրապետության քաղաքացիության խմբային ձեռքբերման, Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը փոխելու, Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից դուրս գալու հարցերը, չեղյալ է ճանաչում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու, վերականգնելու, Հայաստանի Հանրապետության քաղաքացիության խմբային ձեռքբերման մասին Հայաստանի Հանրապետության Նախագահի հրաման-

www.lawinstitute.am

նագիրը, սահմանում է քաղաքացիության վերաբերյալ դիմումների քննարկման կարգը:

ՀՈՂՎԱԾ 30. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

1. Հայաստանի Հանրապետության Նախագահին առընթեր քաղաքացիության հարցերի հանձնաժողովը կազմավորում է Հայաստանի Հանրապետության Նախագահը:

2. Քաղաքացիության հարցերի հանձնաժողովի կանոնադրությունը հաստատում է Հայաստանի Հանրապետության Նախագահը:

ՀՈՂՎԱԾ 31. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝

1) ապահովում է կառավարության, նախարարությունների, կառավարման այլ մարմինների ակտերի համապատասխանեցումը սույն օրենքին.

2) սահմանում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը հաստատող փաստաթղթերի ձևակերպման և դրանք քաղաքացիներին հանձնելու կարգը.

3) սահմանում է քաղաքացիության ձեռքբերման և դադարեցման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկն ու նմուշները.

4) ընդունում է սույն օրենքի կիրարկումն ապահովող որոշումներ:

2. Հայաստանի Հանրապետության կառավարությունն իրավասու մարմինների միջոցով՝

1) լուծում է ճանաչման, ծննդյան, որդեգրման և խնամակալություն կամ հոգաբարձություն նշանակված լինելու հիմքերով քաղաքացիության ձեռք բերման հետ կապված հարցերը.

2) չեղյալ է ճանաչում ճանաչման, ծննդյան, որդեգրման և խնամակալություն կամ հոգաբարձություն նշանակված լինելու հիմքերով քաղաքացիության ձեռք բերման մասին որոշումները.

3) ընդունում է քաղաքացիության վերաբերյալ դիմումներ և այլ փաստաթղթեր, ստուգում դրանց իսկությունը և հիմնավորվածությունը: Քաղաքացիությունը փոխելու կամ քաղաքացիությունից դուրս գալու դեպքերում՝ պարտադիր հայտարարություն է հրապարակում զանգվածային լրատվության միջոցներով.

4) քաղաքացիության վերաբերյալ դիմումները, միջնորդությունները և այլ փաստաթղթերը համապա-

տասխան եզրակացություններով ուղարկում է Հայաստանի Հանրապետության Նախագահին.

5) առաջարկություն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության Նախագահին՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիության ձեռքբերման և Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու մասին.

6) կատարում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիների հաշվառումը.

7) սույն օրենքին համապատասխան պարզում է անձանց պատկանելությունը Հայաստանի Հանրապետության քաղաքացիությանը:

ԳԼՈՒԽ 5

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ՎԱՐՈՒՅԹԸ

ՀՈՂՎԱԾ 32. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ԴԻՍՈՒՄՆԵՐԻ, ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

1. Քաղաքացիության հարցերի վերաբերյալ դիմումները և միջնորդությունները ներկայացվում են գրավոր:

2. Քաղաքացիության հարցերի վերաբերյալ դիմումները քննարկվում են առավելագույնը վեց ամիս ժամկետում: Դիմումի մերժման դեպքում կրկին կարելի է դիմել մերժման օրից մեկ տարի հետո՝ սույն օրենքով սահմանված կարգով:

ՀՈՂՎԱԾ 33. ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՊԱՇՏՈՆՍԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԱՆՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ

Պաշտոնատար անձանց կողմից քաղաքացիության հարցերով դիմումները չընդունելը, քննարկման ժամկետները խախտելը, ինչպես նաև նրանց այլ անօրինական գործողությունները կարող են բողոքարկվել դատական կարգով:

ՀՈՂՎԱԾ 34. ՍՈՒՅՆ ՕՐԵՆՔԻ ՈՒԺԻ ՄԵՉ ՄՏՆԵԼԸ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո ուժը կորցրած ճանաչել «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» Հայաստանի Հանրապետության 1995 թվականի նոյեմբերի 28-ի ՀՕ-16 օրենքը:

ԳԱՅԱՆԵ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոնի հայցորդ, ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության գլխավոր մասնագետ, արդարադատության մայրը



**ՀԱՆՑԱԳՈՐԾ ՎԱՐՔԻ ՆԿԱՏՍԱՍԲ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ
ԽՆԴԻՐԸ ԱՐԴԻ ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Հասարակության և հասարակական կարգի պահպանման հիմնախնդիրը անքակտելիորեն կապված է սոցիալական վերահսկողության երևույթի հետ: Հնարավոր չէ որևէ հասարակության գոյությունը առանց սոցիալական վերահսկողության իրականացման: Այն բնորոշ է պատմական զարգացման բոլոր փուլերում գտնվող բոլոր հասարակություններին և ապահովում է դրա նորմալ գոյությունն ու զարգացումը: Այս հասկացության տարողունակ իմաստը բարդեցնում է դրա վերաբերյալ միատեսակ մոտեցումների ներկայացումը, քանի որ լինելով բազմաֆունկցիոնալ և համընդհանուր բոլոր սոցիալական ինստիտուտների համար, փոխկապակցում է սոցիալական ինստիտուտների ներդաշնակ փոխազդեցության համակարգը, նորմերի, արժեքների և վարքագծի ամբողջականությունը և ի հայտ բերում դրանց խախտման յուրաքանչյուր դեպք: Եթե փորձենք սահմանել սոցիալական վերահսկողությունը, այն խրախուսանքի և պատժի ինստիտուտների ամբողջություն է, որը ուղղորդում է հասարակության անդամների գործունեությունը, խրախուսում ընդունելի վարքագիծը, պատժում անցանկալի վարքագիծը:

Ամերիկյան սոցիոլոգիական դպրոցի ներկայացուցիչ Տ. Պարսոնսը սոցիալական վերահսկողության խնդիրը դիտարկում է սոցիալական համակարգի պահպանման՝ դրան բնութագրող գործառույթների ապահովման և անհատի կողմից այդ գործառույթները իրականացնելու մոտիվացիայի ստեղծման ֆունկցիոնալիստական մոտեցման շրջանակներում: Ըստ հեղինակի՝ վերահսկողությունը սոցիալական համակարգի ներսում տեղի ունեցող գործընթաց է, որը հակազդում է շեղումներին և դրանց միտումներին: «Սոցիալական վերահսկողության շնորհիվ շեղումը հեռացվում է, և սոցիալա-

կան համակարգը վերադառնում է իր նախկին վիճակին¹:

Բերգերը քննարկում և առանձնացնում է սոցիալական վերահսկողության 6 մեխանիզմներ, այն է՝

1. պետաիրավական ճնշում. բռնությունը՝ ֆիզիկական ուժը, սպառնալիքը, բռնության ընդհանուր կիրառման գիտակցումը,
2. տնտեսական ճնշումները, այդ թվում՝ եկամտոտ կորցնելու վախը,
3. վերբալ կամ հոգեկան ճնշում, այդ թվում՝ համոզելը, բամբասանքը, շանտաժը, և այլն,
4. բարոյականություն, սովորույթները և նիստուկացը,
5. մասնագիտական վերահսկողություն՝ պաշտոնական, աշխատանքային, գործընկերային,
6. Ընտանիքը և անձնական ընկերները²:

Որպես մեկ միասնական համակարգ՝ այն գործում է անձի, խմբի և հասարակության շերտերում կամ մակարդակներում. ցանկացած նորմ կարգավորվում է նախ անձի գիտակցության մեջ, որտեղ, ըստ անձի արժեքային դիրքորոշումների, նա կատարում կամ չի կատարում որոշակի գործողություն՝ դրանով նպաստելով կամ հակազդելով սոցիալական վերահսկողության գործընթացին: Եթե անձի, խմբի հասարակության և պետության արժեքները նույնանում են, որը հնարավոր է պատկերացնել միայն իդեալական հասարակության դեպքում, ապա գործում է Դյուրկհեյմի սոցիալական համերաշխության ողջ պատկերը:

Այսպիսով, սոցիալական վերահսկողության համակարգի գործառնության մեջ կարելի է առանձնացնել երկու կողմ՝ նորմատիվային, որը ուղղված է վարքը կարգավորող արժեքանորմատիվ կարգավորիչների գործողությանը, և ինստիտու-

ցիոնալ, որը իրականացվում է սոցիալական վերահսկողության ինստիտուտների միջոցով, որոնք պատմական ձևավորման և զարգացման արդյունք են:

Սոցիալական վերահսկողության համակարգի իդեալական գործառնության դեպքում բացառվում է ցանկացած շեղում և ապահովվում է հասարակական համերաշխություն: Սակայն հասարակության՝ որպես սոցիալական համակարգի էական հատկանիշներից է շեղումը և դրա առավել վտանգավոր դրսևորումը՝ հանցագործությունը: Իրավական տեսանկյունից հանցագործությունը տվյալ պետության շրջանակներում քրեական օրենսդրությամբ նախատեսվող արարք է, որի համար սահմանվում է պատիժ: Հանցագործությունը շեղվող վարքի առավել վտանգավոր և հասարակայնորեն անընդունելի արարք է: Մյուս իրավախախտումներից հանցագործությունը տարբերվում է և՛ արարքի վտանգավորության աստիճանով, և՛ արարքը կատարող անձի վտանգավորությամբ, ինչի պատճառով էլ առավել հաճախ հանցագործություն կատարած անձը մեկուսացվում է հասարակությունից, դատապարտվում ազատազրկման: Սոցիոլոգիական տեսանկյունից հանցագործությունը սահմանվում է որպես սոցիալական նորմերի խախտում, այն բնութագրվում է որպես անբարոյական, հասարակության համար պատժելի երևույթ՝ դատապարտելի տվյալ հասարակության շրջանակում գործող արժեհամակարգի շրջանակում: Հանցագործ վարքի նկատմամբ վերահսկողություն իրականացվում է սոցիալական վերահսկողության բոլոր միջոցներով՝ նման վարքը կանխելու, պատժելու, հանցագործին ուղղելու միջոցներով: Հասարակությունը, տարբերակելով հանցագործ վարքը շեղվող վարքի այլ տեսակներից, ձևավորել է մաս հատուկ ինստիտուտներ, որոնք կոչված են եղել հենց հանցագործ վարքի նկատմամբ վերահսկողությանը: Այս ինստիտուտները ձևավորվել են շատ վաղ պատմական շրջանում և ուղղված են եղել այնպիսի նորմերի խախտման դեմ, որոնք տվյալ հասարակությունում ընկալվել են որպես համընդհանուր կարգի խախտում: Հասարակական կարգը խոչընդոտողների կամ խախտողների նկատմամբ եղել է պատժելու, վախեցնելու, ստիպելու ինստիտուտներ: Այսինքն՝ պատմականորեն սոցիալական վերահսկողության ինստիտուտները ձևավորվել են որպես պատժի ինստիտուտներ:

Նախնադարյան, արխայիկ հասարակությունում սոցիալական վերահսկողության մեխանիզմը շատ պարզ էր. ավանդույթն էր սահմանում ընդունելի վարքագծի ձևերը և ցեղախմբի յուրաքանչյուր անդամ խրախուսվում կամ պատժվում էր համապատասխան գործող ավանդույթային նորմերի:

Առաջին նորմերը ստեղծվեցին որպես տաբուներ՝ պահպանելու այն ամենը, ինչը սուրբ և նվիրական է, և մյուս կողմից պատժելու այն գործողությունները, որոնք անարգել կամ վիրավորել էին այդ սրբությունը: Առաջին նորմերի կիրառման պրակտիկան իրականացնում էին մեծ հեղինակություն ունեցող անձինք՝ հոգևոր առաջնորդները կամ ցեղերի առաջնորդները: Նրանք օժտված էին տաբուն խախտողի նկատմամբ պատժի գործառնություններն իրականացնելու իրավունքով: Աստիճանաբար սոցիալական վերահսկողությունը տաբուների պարտադիր կատարման պահանջից վերածվեց նորմերին ենթարկելու մեխանիզմների: Այդ մեխանիզմները դարձան սոցիալականացման և պետական հարկադրանքի նախատիպեր, քանի որ ընտանիքի և պետության ստեղծմամբ կատարվեց սոցիալական վերահսկողության բարդացում: Չնայած դրան՝ մինչև 18-19-րդ դարերը անգլիական դատարաններում դատական վճիռները հարուցվում էին որպես «անգիայի թագուհին ընդդեմ բանտարկյալի» ձևով: Պատժի խնդիրը հանցագործ վարքի փոխհատուցումն էր, հետագա հանցագործությունների կանխումը և արդարության վերականգնումը: Ընդ որում որքան դաժան և հասարակայնորեն ցուցադրելի վայրում էր իրագործվում պատիժը, այնքան արդյունավետ էր այն համարվում հենց հետագա հանցագործությունների կանխման համար: Տիպիկ օրինակ էր այն, որ անգլիական օրենսդրությունը միջին դարերում աղքատ թափառաշրջիկներին ենթարկում էր մահապատժի:

Մարդկության պատմական զարգացման արդյունքում վերահսկողության հիմնական միջոցը՝ միաբևեռ ազդեցությունը զիջեց ազդեցության և սանկցիաների բազմաբնույթ ձևերի և ինստիտուցիոնալացվեց: Միջնադարյան պետությունում սովորույթը որպես վերահսկողության միջոց իր տեղը աստիճանաբար զիջեց ընտանեկան, բարոյական, կրոնական նորմերին:

www.lawinstitute.am

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Միջնադարյան հասարակությունը ձևավորեց սոցիալական վերահսկողության ինստիտուտները որպես բազմակողմ, սակայն հատկապես կրոնական նորմերի վրա հիմնված: Այս ժամանակահատվածում սոցիալական վերահսկողության կարևորագույն միջոց էր կրոնը, որը որպես սոցիալական ինստիտուտ վերահսկողություն էր իրականացնում բոլոր մյուս ինստիտուտների վրա, այդ թվում՝ ընտանիքի, որը համարվում է սոցիալական վերահսկողության առաջնային և բոլոր մյուս ինստիտուտների ներգործությունը կրող ինստիտուտ: Ընտանիքը սոցիալականացման և վերահսկողության գործում իր դերակատարումը պահպանել է նաև արդի հասարակությունում: Ընտանիքում առաջնային սանկցիաների միջոցով ձևավորվում են վարքի առաջին կողմնորոշիչները: Կախված ընտանիքի արժեքային համակարգից՝ երեխային կարող են տրվել տարբեր արժեքներ, սակայն համընդհանուր մշակութային համակարգում այդ արժեքները համընդհանուր ընդունելի են: Շատ հաճախ ընտանիքը չի կարողանում ապահովել սոցիալական վերահսկողության գործառույթը, դա բնորոշ է հատկապես ռիսկի ընտանիքներին, որտեղ սոցիալականացման գործընթացը ամբողջական չի իրականացվում, առկա է հակասոցիալական վարքագիծ ընտանիքի անդամների մոտ: Այսպես, թմրամոլ ծնողների երեխաները, որքանով էլ որ տեղեկացվեն թմրամոլության բացասական հետևանքների վերաբերյալ, շատ մեծ հավանականություն ունեն վերցնելու այդ բացասական օրինակը: Հակահասարակական արժեքների յուրացումը ընտանիքից դուրս կարող է տեղի ունենալ հակասոցիալական վարքագիծ ունեցող միավորումների շրջանում, որոնք ընդգրկում են ընտանեկան ազդեցությունից դուրս մնացած անձանց:

Սկսած 18-րդ դարից, գործող նորմերին չենթարկվելու նկատմամբ կիրառվող պատժամիջոցները աստիճանաբար հումանիզացվեցին: Ընդ որում այդ գործընթացում շատ լուրջ փոփոխության հիմք հանդիսացավ իտալացի հետազոտող Չեզարե Բեքարիայի «Հանցագործությունների և պատժի մասին» աշխատությունը, որը քննադատելով հանցագործներին խստագույն պատժելու վրա հիմնված արդարադատության համակարգն ու գործող ինստիտուտները, առաջ քաշեց կատարված հանցագործությանը համարժեք պատիժ սահմանելու սկզբունքը: Դյուրկհեյմը, շարունակելով Բեքարիա-

յի մոտեցումը, առաջ քաշեց պատիժների և սոցիալական վերահսկողության տարբեր միջոցների էվոլյուցիայի գաղափարը: Ըստ նրա՝ պատիժը սոցիալական վերահսկողության բնական միջոց է բոլոր հասարակություններում, սակայն այն յուրաքանչյուր հասարակությունում բնութագրվում է հենց հասարակական հարաբերությունների զարգացման աստիճանով: Տոտալիտար և չզարգացած հասարակություններում կիրառելի են առավելապես խիստ և դաժան պատիժները, քաղաքակիրթ հասարակություններում դրանք առավել քան հումանիստական են:

Պատժելուն զուգահեռ առաջ եկան նաև կանխելու մեխանիզմը և պատժամիջոցների հումանիզացումը՝ որպես հանցագործության կանխման ինստիտուտներ: Լուսավորչականության ժամանակներից սկսած ձևավորվեցին արդի հասարակությունների նախատիպերը, որտեղ սոցիալական վերահսկողության համակարգում առաջնային մշակություն ստացան իրավունքի նորմերը: Այս տիպի հասարակություններում սոցիալական այլ ինստիտուտները, ինչպիսիք են ընտանիքը, կրոնը որպես սոցիալական վերահսկողության միջոցներ, աստիճանաբար իրենց տեղը զիջեցին իրավական ինստիտուտներին, հասարակական հարաբերությունների զգալի մասը իրավական կարգավորում ստացավ, բարդացավ, հետևաբար սոցիալական վերահսկողության առանձին գործառույթը այլևս իրականացվում էր տարբեր կազմակերպությունների, կառույցների և սոցիալական ինստիտուտների կողմից որպես մեկ միասնական համակարգ, որոնք հիմք հանդիսացան արդի հասարակությունների սոցիալական վերահսկողության պետաիրավական միջոցների զարգացմանը: Բնականաբար, ավտորիտար պետություններում համակարգը բնութագրվում էր որպես ավտորիտար, ամբողջատիրական մեթոդներով վերահսկողություն իրականացնող կառույց, հետևաբար այն մեխանիզմները, որոնք գործի էին դրվում տարբեր սոցիալական ինստիտուտների կողմից, լեզիտիմացված էին ավտորիտար իշխանության ուժով և գաղափարախոսությամբ: Այսպես, խորհրդային հասարակությունում այդ միջոցները տոտալ վերահսկողության հատկանիշ ունեին, որը լեզիտիմացված էր համապատասխան գաղափարախոսության ներքո. այն խրախուսվում և գործի էր դրվում, ինչի արդյունքում հասարակական կյանքի

բոլոր ոլորտները գտնվում էին վերահսկողության ներքո: Դեմոկրատական զարգացման ուղին որդեգրած արևմտյան պետություններում սոցիալական վերահսկողության համակարգը զարգացավ անձի և պետության միջև ձևավորված հավասարակշիռ փոխհարաբերությունների հիման վրա, ինչի պարագայում հարկադիր միջոցները լեգիտիմ են ոչ միայն իշխանության, այլև հասարակության մեծամասնության կողմից:

Այսպիսով, հանցագործ վարքի նկատմամբ սոցիալական վերահսկողության պատմական զարգացման ողջ ընթացքը ցույց է տալիս, որ այն արտացոլում է հասարակական հարաբերությունների ողջ էությունը, և փոփոխվում դրանց տեղաշարժերի դեպքում: Հենց սա է պատճառը, որ խորհրդային կարգերի փլուզումից հետո արմատական տրանսֆորմացիոն փոփոխություններ կրած նախկին ԽՍՀՄ-ի տարածքի բոլոր հասարակություններում համակարգը ենթարկվեց տրանսֆորմացիոն խորքային գործընթացների, ամբողջությամբ վերափոխվեց՝ սկսած արժեքներից և նորմերից մինչև սոցիալական ինստիտուտների գործունեություն: Անշուշտ այս փոփոխություններից գերծ չէր նաև հայ հասարակությունը: Շատ տեսաբանների կարծիքով՝ հայ հասարակության տրանսֆորմացիոն շրջանը շարունակվում է առ այսօր: Տրանսֆորմացիոն գործընթացները ընդգրկել են հասարակական կյանքի բոլոր ոլորտները, այդ թվում՝ սոցիալական վերահսկողության համակարգը, որում կարելի է առանձնացնել .

1. սոցիալական վերահսկողության հիմքը կազմող արժեքանորմատիվ կարգի տրանսֆորմացիա, նորմերի և արժեքների արմատական փոփոխություն,

2. սոցիալական վերահսկողության գործառույթն իրականացնող սոցիալական ինստիտուտների տրանսֆորմացիա. կառուցվածքային փոփոխություններ և ինստիտուցիոնալ վերակազմավորումներ:

Տրանսֆորմացիոն գործընթացների ողջ անոմիկ առանձնահատկությունը նրանում է, որ արժեքների և նորմերի վակումը, այնուհետև դրանց փոխակերպումն ու զարգացումը տեղի են ունենում առանց որոշակի վեկտորային ուղղվածության, ավելի շատ տարերայնորեն: Նոր արժեքների ձևավորումը, ի տարբերություն նորմատիվային կարգի, շատ ավելի դանդաղ գործընթաց է,

հետևաբար արդի շրջանում հակասություն է առաջացել նաև արժեքների և նորմերի միջև: Հայ հասարակության արժեքների լուրջ ուսումնասիրություններ է կատարել սոցիոլոգ Գ. Պողոսյանը: Ըստ հեղինակի՝ առօրյա գիտակցություն սովորաբար չափազանցնում է բարքերի անկման աստիճանը, ինչը բնական հոգեբանական հետևանքն է մարդկանց մոտ ծագող այն տագնապալի զգացողության, որ հասարակությունում ուժեղանում է «ամեն ինչ թույլատրվում է» սկզբունքը: Հեղինակի կողմից կատարված հետազոտությունները ցույց են տվել, որ արդի հայ հասարակության արժեքային համակարգում գերակա են նյութական բարիքների, փողի, հարստության արժեքները որպես ընտանիքին և մերձական միջավայրին բարօրության նախապայման: Անշուշտ, եթե դիտարկենք հանցագործությունների և շեղվող վարքի Մերտոնի տեսությունը, ապա առաջնային բարիքների անհասանելիությունը բերում է լարվածության, ինչն էլ հանցագործության հիմնական պատճառն է: Միևնույն ժամանակ պետությունից հարկ թաքցնելու, պետությանը խաբելու կոմունիստական հասարակարգից մնացած սովորույթները դեռևս խոր հիմքեր ունեն և չեն դիտվում որպես հանցագործություն: Այսպիսով, բարոյական նորմերի թուլացումը, նյութական արժեքների գերակա լինելը դրանց զուգակցող երևույթների դրսևորմամբ՝ մարզինալ խմբերի ձևավորմամբ, կոռուպցիայի զարգացմամբ, թմրամոլության աճով, նպաստավոր պայմաններ են հանցագործությունների կատարման համար: Այս խնդիրները առկա են բոլոր հասարակություններում, սակայն շատ ավելի արդիական և սուր՝ փոքր և զարգացող, տրանսֆորմացվող հասարակություններում, որոնք մի կողմից չեն ստեղծել ինքնակարգավորման մեխանիզմներ, մյուս կողմից ընդգրկվում են գլոբալ գործընթացների մեջ: Ինչպես նշում է ամերիկացի քրեագետ, սոցիոլոգ Գ. Նյումենը, տնտեսապես զարգացած և կայուն ժողովրդավարություն ունեցող պետություններում, ինչպես օրինակ ԱՄՆ-ում, հանցագործությունների տեսակարար կշռի բարձր ցուցանիշը ավելի քիչ վտանգավոր է քան զարգացող երկրների ավելի ցածր ցուցանիշը. հանցավորության այդ աստիճանը այդքան բացասական ազդեցություն չի թողնում հասարակության բարոյական գիտակցության վրա, որքան փոքր հասարակություններում կատարվող հանցագործությունները: Այս բնութագրու-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

մը շատ բնորոշ է և մեր հասարակությանը, որտեղ խիստ նվազել է սոցիալական վերահսկողության առաջնային ձևերի ազդեցությունը, նոր ստեղծվող իրավական միջոցները չեն կարողանում ամբողջականության մեջ մտնել վերահսկողության այլ միջոցների հետ և առաջանում է լարվածություն ոչ միայն հասարակության անդամների, այլ՝ տարբեր սոցիալական ինստիտուտների, դրանց դերակատարումների միջև: Եվ այսպես, չլուծելով իր ներքին սոցիալական կազմակերպման խնդիրները, մեր հասարակությունը ներգրավվել է գլոբալ աշխարհի համաշխարհային միտումների հետ, ինչը շատ ավելի վտանգավոր հետևանքներ կարող է ունենալ: Մի շարք հեղինակներ այս երևույթը բնութագրում են որպես կրիմինալիզացիա կամ քրեականացում: Ընդ որում այս միտումը հատկանշական է ողջ երկրագնդին: Այսպես, եթե 20-րդ դարի սկզբին հանցագործության ցուցանիշը հաշվարկվում էր 1-1.5% ընդհանուր երկրագնդի բնակչության թվով, ապա ՄԱԿ-ի վերջին տվյալներով այն արդեն կազմում է 5%: Վերջին 30-40 տարվա ընթացքում այն միջինում աճել է 3-4 անգամ: Միայն մեկ տարում ամբողջ աշխարհում հաշվարկվում է գրանցված հանցագործությունների միջինը 400-500 մլն դեպք: Այս միտումը պայմանավորված է հետևյալ գործոններով՝ հանցագործությունների մասնագիտացմամբ, դրանց ինտենսիվ դառնալով, կազմակերպված հանցագործությունների աճով և հանցավորության կառուցվածքային փոփոխությամբ, իշխանական մարմինների կոռումպացվածությամբ, ՉԼՄ-ների բովանդակության քրեականացմամբ, մտավոր՝ ինտելեկտուալ հանցագործությունների աճով, հանցագործությունների անպատժելիության հետևանքով, կոռուպցիայի աճով, ամենօրյա կենցաղում քրեական վարքագծի տարրերի ներմուծմամբ և դրանց ընտելացմամբ: Այս գործոններից յուրաքանչյուրի ազդեցությունը ուսումնասիրելու համար անհրաժեշտ է առանձին ուսումնասիրություն կատարել, սակայն միևնույն ժամանակ կարելի է դրանք ուսումնասիրել մեկ միասնականության մեջ, քանի որ դրանք փոխկապված են և անմիջականորեն ներազդում են մեկը մյուսի վրա՝ որպես հանցագործության և սոցիալական վերահսկողության միջոցների ներգործություն: Այսպես, ՉԼՄ-ները, որոնք վերջին 20 տարիներին հիմնականում շրջանառում են քրեական թեմատիկան, իրենց բացասական ազդեցությունն են թողել հան-

ցագործ վարքի տարածման վրա: Սակայն եթե ԱՄՆ-ում և Արևմտյան Եվրոպայի երկրներում այս երևույթի դեմ առկա է սոցիալական իմունիտետ, ապա ԱՊՀ երկրներում, նաև Հայաստանում այն վերահսկողության ենթակա չէ և ունենում է իր լատենտային ազդեցությունը վարքի, հատկապես անչափահասների վարքի ձևավորման վրա: Այս ընդհանուր միտումները ստիպել են միջազգային հանրությանը և առանձին պետություններին մեծ ուշադրություն դարձնել սոցիալական վերահսկողության հատկապես պետաիրավական միջոցների կիրառմանը, այդ նպատակով բարելավել ինչպես օրենսդրությունը, այնպես էլ դրա կիրառման պրակտիկան՝ ընդունված նորմերի արդյունավետությունը և դրանց գործունակությունը, այսպիսով, եթե պատիժը չի կիրառվում հանցագործություն կատարած անձի վրա, դա թուլացնում է սոցիալական վերահսկողության համակարգի արդյունավետությունը: Ինչպես նշում են ռուս տեսաբաններ Կրիվոշելը, Շաշկովը երբ չեն գործում իրավունքի նորմերը, դրանց փոխարինում են անհատական, խմբային կամային նորմերը և դրան համապատասխան վերահսկողության միջոցները, ինչը էականորեն նվազեցնում է պետաիրավական վերահսկողության արդյունավետությունը: Անպատժելիությունը ծնում է նոր հանցագործություններ: Այդ իսկ պատճառով շատ կարևոր է հենց իրավունքի և օրենքի, պատժի և դրա անխուսափելիության նկատմամբ վերաբերմունքի փոփոխությունը, այս ինստիտուտների գործառնության արդի մոտեցումների ներդրումը և իրագործումը: Ընդհանուր առմամբ ամբողջ աշխարհում այս մարմինները՝ ոստիկանությունը, դատական և պատժի համակարգը առավել իներտ են, քան մյուս ինստիտուտները: Դրանց գործունեությունը հաճախ կարծրատիպային է և չի փոփոխվում իրավական նորմերի փոփոխմանը համաչափ: Այսինքն՝ միայն օրենսդրական փոփոխությունների արդյունքում հնարավոր չէ հասնել դրանց գործառնության արդյունավետության բարձրացման, եթե առկա չէ նոր մտածողության ու գաղափարախոսության ներդրում: Այս իմաստով ռուս հեղինակ Լուրենը ընդգծում է, որ պետք է օրինակ վերցնել այնպիսի երկրների փորձից, որտեղ սոցիալական վերահսկողության համակարգում հավասարաչափ նշանակություն ունեն ֆորմալ և ոչ ֆորմալ ինստիտուտները: Այսպիսով, ճապոնիան այն բացառիկ երկրներից է, որտեղ

պատմամշակութային անցյալը և արդի միտումները, ազգային և ներազգային փորձը արդյունավետ համադրված են, և հանցագործությունը այս երկրում գտնվում է համեմատական ցածր ցուցանիշի վրա: Միևնույն ժամանակ հեղինակը առաջ է քաշում հանցագործ վարքի նկատմամբ սոցիալական վերահսկողության ինստիտուտների գործունեության արդյունավետության չափանիշները՝ իրավապահ ինստիտուտների գործառնության հումանիզացումը և հանցագործությունների թվի նվազումը, այդ թվում՝ նաև լատենտայնության նվազումը: Այսպիսով, արդյունավետությունը ոչ միայն քանակական ցուցանիշ է, այլ նաև որակական, որը ցույց է տալիս, թե ինչպես է համակարգը արձագանքում հանցագործ վարքին: Իրապես, այս մոտեցումը ունեն արևմտյան հասարակությունները՝ չբացառելով հանցագործին բացահայտելու, նրան ըստ կատարած հանցագործության պատժելու և միաժամանակ մարդու իրավունքները հարգելու սկզբունքների միաժամանակյա իրագործումը: Այս քաղաքականությունը արդեն մեկ տասնամյակից ավելի որդեգրվել է նաև ՀՀ իրավապահ մարմինների՝ ոստիկանության, արդարադատության համակարգի կողմից, սակայն արդյունքների մասին խոսելը դեռ վաղ է: Ինչպես նշում է տեսաբան Է. Հարություն-

յանը, ցանկացած համակարգ ունի իրավական ու գործունեության կողմեր: Եվ եթե օրենսդրական ձևակերպում ստանալուց հետո այն կորցնում է իր «անցումային» վիճակը, ապա գործունեության տեսանկյունից իրավապես այլևս նոր հիմունքներ ունեցող համակարգը դեռևս պահպանում է անցումային կարգավիճակը, քանի դեռ չի ավարտվել հասարակության գոյության ու գործառնության սոցիալ-տնտեսական, քաղաքական, բարոյահոգեբանական ու կառուցվածքային-ինստիտուցիոնալ հիմունքների տրանսֆորմացիան և չեն գործում համակարգի ինքնավերարտադրության մեխանիզմները:³ Հետևապես մեր հասարակությունը դեռևս շատ լուրջ խնդիր ունի այս քաղաքականության հետևողական զարգացումն ապահովելու, հիմնարար սկզբունքները պահելու, դրանց համար բավարար հասարակական, քաղաքական կամք և մարդկային ներուժ զարգացնելու հարցում: Միայն այս պարագայում սոցիալական վերահսկողության համակարգը ունակ կլինի արդյունավետ գործելու, կանխելու հանցագործ վարքի և ընդհանուր առմամբ հանցավորության միտումները, ինչպես նաև դիմագրավելու արդի աշխարհի նոր մարտահրավերներին:

Օգտագործված գրականություն

1. Բերգեր Պ.Լ. Սոցիոլոգիայի ներածություն, Հումանիստական հեռանկար, Մ., 1996:
2. Հարությունյան Է. Անցումային հասարակությունը որպես տրանսֆորմացիոն գործունեության համակարգ, Երևան, 2000:
3. Յադով Վ. Ա. Տրանսֆորմացիոն հասարակությունը, Մ., 2001:
4. Афанасьев В., Гилинский Я. Девиантное поведение и социальный контроль в условиях российского кризиса. СПб., 1995.
5. Лунеев В.В. Преступность в XXI веке (методология прогноза) социологические исследования, 1996. N 7.
6. Погосян Г. А. Армянское общество в трансформации. Лусабац, Ер., 2003.
7. Merton R K. Social Theory and Social Structure. 2nd Revised Edition. New York: Free Press, 1968.

¹ Տե՛ս Բերգեր Պ.Լ. Սոցիոլոգիայի ներածություն, Հումանիստական հեռանկար, Մ., 1996, էջ 58:

² Տե՛ս նույն տեղը, էջ 68:

³ Տե՛ս Հարությունյան Է. Անցումային հասարակությունը որպես տրանսֆորմացիոն գործունեության համակարգ, Երևան, 2000, էջ 241:

⁴ Տե՛ս Лунеев В.В. Преступность в XXI веке (методология прогноза) социологические исследования, 1996. N 7. С. 95.

ՎԱՀՐԱՄ ԹԱՄԱԶՅԱՆ

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի իրավաբանական ֆակուլտետի, միջազգային և եվրոպական իրավունքի ամբիոնի հայցորդ



ԱԶԳԵՐԻ ԻՆՔՆՈՐՈՇՈՒՄԸ ԵՎ ԳԼՈՒԲԱԼ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ներկայումս ազգերի ինքնորոշման հարցը բնավ էլ չի անցել անցյալի դոկտրինների հիշողությունների շրջանը: Առավել ևս, այս հարցը ոչ այնքան տեսական է, որքան գործնական, քանի որ նրա վրա է հիմնվում քաղաքականությունը, փորձելով գտնել արդար որոշումներ, որոնց բացակայությունը բերում է մի ամբողջ ազգի անթիվ զոհերի և բազում արհավիրքների:

Շատ դեպքերում բախում է գնում «փոքր կայսերական մտածելակերպի», ազգերի ինքնորոշման իրավունքի իրականացման հնարավորությամբ, որն էլ կոչ է արված ՄԱԿ-ի Կանոնադրությամբ (հոդ.1, կ.2)¹ և ամրագրված է Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին 1966 թվականի միջազգային դաշնագրում «Բոլոր ժողովուրդներն ունեն ինքնորոշման իրավունք: Այդ իրավունքի ուժով նրանք ազատորեն սահմանում են իրենց քաղաքական կարգավիճակը և ազատորեն ապահովում իրենց տնտեսական, սոցիալական և մշակութային զարգացումը: (հոդ.1, կ.1)²: Պետությունները, որոնք ստորագրել են Եվրոպայում Անվտանգության եւ Համագործակցության Խորհրդաժողովի Հելսինկյան եզրափակիչ ակտը (1975թ.), պարտավորվել են հարգել «ազգերի՝ իրենց ճակատագիրը տնօրինելու իրավունքը», հաստատելով, որ «բոլոր ազգերը միշտ իրավունք ունեն լիիրավ ազատության պայմաններում որոշել, երբ և ինչպես ցանկանում են, իրենց ներքին և արտաքին քաղաքական կարգավիճակը առանց դրսի միջամտության և իրականացնել իրենց հայեցողությամբ իրենց քաղաքական, տնտեսական և մշակութային զարգացումը»: (կ.VIII)³

Վերջին տարիներում ռուսական քաղաքական և գիտա քաղաքական շրջանակներում նկատվում է միտում՝ թաղելու ազգերի ինքնորոշման իրավունքը: Եվ դա արվում է տարածքային ամբողջականության սկզբունքի հաղթանակի և համակողմանիության համար: Այսպես, ռուս քաղաքական գործիչ Ռամզան Աբդուլատիպովը հայտարարեց, թե ՄԱԿ-ի կանոնադրությունում իբր ասվում է, որ ազգերի ինքնորոշումը «չպետք է խախտի պետության տարածքային ամբողջականությունը»⁴: Բայց ՄԱԿ-ի կանոնադրությունում խոսք չկա «տարածքային ամբողջականություն» հասկացության մասին, այնտեղ խոսվում է «տարածքային անձեռնմխելիության» մասին, և այն կապված է ոչ այնքան ազգերի ինքնորոշման, որքան պետությունների միջև ուժ չգործադրելու հետ: Խորապես սխալվում են նաև նրանք, ովքեր պնդում են, թե ժամանակակից միջազգային իրավունքի նորմերով «հստակ ասված է, որ տարածքային ամբողջականությունը և պետության քաղաքական միասնությունը չի կարող կասկածի տակ առնվել անգամ ազգերի ինքնորոշման իրավունքով»⁵: Հատուկ հետևողականությամբ և համառությամբ գիտնական-ազգաբան Վ.Տիշկովը երկար տարիների ընթացքում խորտակում է ազգերի ինքնորոշման իրավունքը: Նա առաջարկում է հրաժարվել «ազգ» հասկացությունից: Արդյունքում նա բացահայտեց, որ «ազգերի ինքնորոշման իրավունք» հասկացություննույն ժամանակ, որ դա բացառապես «մեր սոցիալիստական աղճատումն է», և կա «ինքնորոշման իրավունք», որը «հավասարազոր չէ էթնիկ խմբի հասկացությանը»⁶: Կարելի է մտածել, թե ազգերի հասկացությունը հավասարազոր է էթնիկ խմբի հասկացությանը և իր հիմքում չի հասկացվում որպես ազգ, որն էլ Վ.Կյուչեվսկու ձևակերպմամբ դառնում է պետություն⁷: Պետք է նկատել, որ հիմնական եվրոպական լեզուներում «ազգ» և «պետություն» հասկացությունները գրեթե հոմանիշներ են, որը նույնպես ընդունում է Վ. Տիշկովը: Փաթաթելով ազգին ձևակերպում, ինչպես՝ «տոհմ, միայն բանակով», նա իրականում հռչակում է անհեթեթություն, որը չի համապատասխանում ոչ մի իրականության և հակասության մեջ է ընկնում ինքն իր հետ:

Մեկ ուրիշ, ոչ պակաս կարևոր հանգամանք «ազգ» հասկացության հետ կապված, որը

www.lawinstitute.am

սերտորեն առնչվում է տարածքի խնդրի հետ, հանդիսանում է այն, որ ինքնորոշվող սուբյեկտի տակ ենթադրվում են ոչ թե ինչ-որ քանակությամբ անհատներ կամ նրանց հանրագումար որոշակի տարածքում, այլ նրանց հաստատուն ընդհանրությունը՝ ընդհանուր բնորոշումներով: Եվ պետք է համաձայնել Ռ. Մյուլլերսոնի հետ, որը գրում է, որ ինքնորոշման ժամանակ խոսքը գնում է հենց ազգի մասին, այլ ոչ թե բնակչության: Անգամ եթե ասենք, որ Մոսկվա քաղաքի Օկոտյաբորսկի շրջանում ավելի շատ բնակիչ կա, քան Լեռնային Ղարաբաղում, միևնույն է, ինքնորոշվելու իրավունք ունի Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը, այլ ոչ թե մարդիկ, որոնք ունեն մշտական գրանցում՝ մայրաքաղաքի շրջանում: Ժողովրդի հիմքում, որպես ինքնորոշման սուբյեկտ, ընկած է ազգը կամ մի այլ էթնիկ համայնք, որով նույնականացվում է տվյալ տարածքը⁸:

Եվ ինչպես նշում է Վիգեն Քոչարյանը, ընդհանուր առմամբ ինքնորոշվող սուբյեկտի մասին գոյություն ունեցող բոլոր ձևակերպումները մեզ տալիս են ընդհանուր, բայց միանգամայն որոշակի պատկերացում նրա մասին, թե ինչ է նկատի առնվում համապատասխան միջազգային-իրավական ակտերում «ազգ» հասկացության տակ⁹:

Ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքի ուժով, որը ամրագրված է Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությունում¹⁰, բոլոր ժողովուրդները իրավունք ունեն ազատ որոշելու՝ առանց դրսի միջամտության, իրենց քաղաքական կարգավիճակը և իրականացնելու իրենց տնտեսական, սոցիալական և մշակութային զարգացումը և բոլոր պետությունները պարտավոր են հարգել այդ իրավունքը՝ համաձայն կանոնադրության դրույթների¹¹:

Յուրաքանչյուր պետություն պարտավոր է օժանդակել միասնական և անհատական գործողություններով ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքի իրականացմանը՝ համաձայն կանոնադրության դրույթների և կանոնադրությամբ իր վրա դրված պարտականությունները կատարելիս ցուցաբերել օգնություն Միավորված ազգերի կազմակերպությանը, սույն սկզբունքը իրականացնելու նպատակով, որպեսզի՝

ա. նպաստել բարեկամական հարաբերություններին և պետությունների միջև համագործակցությանը և

բ. անհապաղ վերջ դնել գաղութացմանը, ցուցաբերելով պատշաճ հարգանք շահագրգիռ ժո-

ղովուրդների ազատ արտահայտված կամքին, նաև նկատի ունենալով, որ ժողովրդի հպատակեցումը օտար լծին, իշխելը և շահագործումը հանդիսանում է սույն սկզբունքի խախտում, նույնն է, թե ժխտել հիմնական մարդու իրավունքները, և հակասում է Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությանը:

Յուրաքանչյուր պետություն միասնական և անհատական գործողությունների միջոցով պարտավոր է օժանդակել մարդու իրավունքների և հիմնական ազատությունների համընդհանուր հարգմանը և պահպանմանը՝ համաձայն կանոնադրության դրույթների:

ՄԱԿ-ի փաստաթղթերում արտահայտված է ինքնորոշման սկզբունքի նորմատիվային գլխավոր բովանդակությունը: Այսպես, Միջազգային իրավունքի սկզբունքների մասին հռչակագրում ընդգծվում է. «Ինքնիշխան և անկախ պետության ստեղծումը, անկախ պետությանը միանալը կամ նրա հետ միավորվելը, կամ ժողովրդի կողմից ազատորեն որոշված ցանկացած այլ քաղաքական կարգավիճակի սահմանումը՝ այդ ժողովրդի կողմից ինքնորոշման իրավունքի իրականացման ձևերն են»¹²:

Բազմազգ պետության տարածքային ամբողջականությունը չի կարող իրապես երաշխավորվել ո՛չ կախարդանքով, ո՛չ անգամ միջազգային ճանաչմամբ՝ հատկապես այն պատճառով, որ այն կարող է պայթել ներսից՝ բնակչության մի մասում, այլազգի ու օտար բոլոր չափանիշներով և որը որոշել է օգտվել իր բնական իրավունքից՝ գործող միջազգային նորմերով ճանաչված:

Ինչպես թվում է որոշ քաղաքագետներին, մեր դարաշրջանին բնավ էլ հատուկ չէ «համընդհանուր ինտեգրացումը»: Ինտեգրացման ընթացքը չի կրում ընդհանուր բնույթ, որովհետև այն նկատվում է միայն Արևմտյան Եվրոպայում: Մեր դարաշրջանին հատուկ է մի ուրիշ ընթացք՝ ժողովուրդների ազգային ամրապնդման ընթացքը, որը գոյություն ունի վաղուց ձևավորված «ազգ-պետություններում»: Ի դեպ, հենց այդ գործընթացն է խոչընդոտում ինտեգրմանը՝ նրա առջև դնելով միանգամայն որոշակի սահմանափակումներ. ազգային-պետական միավորները չեն ցանկանում ձուլվել Եվրոպական հանրության՝ արդեն Եվրոպական միության ազգային կազմություններում, որոնք փորձում են մեզ օրինակ ծառայեցնել «տարածքային ամբողջականության» պահապան-ջատագովները՝ շտապելով հասնել ազգամիջյան հարաբե-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

րությունների պետության երկատմանը և ազգային պետականության փոխարինմանը «ազգային-մշակութային սկզբունքով»:

Ուստի հարկ է նշել, որի մասին վերը ասված է՝ շարադրված սույն սկզբունքում, որ յուրաքանչյուր պետություն պարտավոր է ձեռնարկել մնալ ժողովուրդներին ինքնորոշելու, ազատության և անկախության իրենց իրավունքից զրկելու ցանկացած բռնի գործողություններից: Այդ ժողովուրդները նման բռնի գործողությունների դեմ պայքարելու և դիմադրություն ցուցաբերելու նպատակով, իրենց ինքնորոշման իրավունքի իրականացման կարգում, իրավունք ունեն ձեռք բերելու օժանդակություն և ստանալ այն՝ համաձայն ՄԱԿ-ի կանոնադրության նպատակների և սկզբունքների¹³: Բազմազգ պետություններում «մշակութային ինքնավարությանը» զրկելով գրից և այլ տարրերից, տարածքային ամբողջականությունը կարող է պահպանվել կրակով և սրով: Այնուամենայնիվ այն ոչ միայն անմարդկային է, այլև ոչ ռացիոնալ, թեկուզև այն պատճառով, որ ոչ հաստատուն է և ոչ էլ երկարաժամկետ:

Յուրաքանչյուր պետության ինքնիշխան իրավունքն է ճանաչել այլ պետությանը, սակայն որոշները կսահմանափակելին ինքնորոշման իրավունքի արդյունքում պետության առաջանալը: Չի պարունակում այն նաև նորմեր՝ նորակազմ պետության ճանաչմանը արգելող, եթե վերջինս անջատվում է ուրիշ պետությունից, չնայած նրա անհամաձայնությանը: Յուրաքանչյուր միջամտություն որևէ պետության կողմից ուրիշ երկրի ինքնորոշման գործընթացին, առավել ևս զավթելը կամ ինքնորոշվող տարածքի ձեռքբերումը (ամբողջովին կամ մասնակի) հանդիսանում է միջազգային իրավունքի խախտում: Օրինակ, Թուրքիան ճանաչել է Կիպրոսի Հանրապետությունից անջատված՝ այսպես կոչված Հյուսիսային Կիպրոսի հանրապետությանը: Ինքնըստիներյան ճանաչումը կհամարվեր օրինական, սակայն հակաօրինական էր թուրքական գործի մուտք գործելը Կիպրոս, որոնք 1983 թվականին ապահովեցին անջատողական պետականակերպ նորակազմության առաջանալուն, որով խախտվեց և վնասվեց հենց ինքնորոշման օրինաչափ իրավունքը: Մի ուրիշ օրինակ. Վաշինգտոնի կողմից Թայվանի դե-ֆակտո ճանաչումը, համաձայնեցվածությունը այդ նորակազմության հետ՝ ակտիվ ռազմական աջակցությամբ: Նաև Սերբիայից Կոսովոյի առանձնանալը, որը միանգամայն ինքնուրույն ակցիա չէր, քանի որ ու-

ղեկավարող զորքից ռազմական միջամտությամբ, այդ թվում՝ ուղղակի ագրեսիայով:

Քանի անգամ պետք է ճանաչվի ժողովուրդների ինքնորոշման իրավունքը, որպեսզի այդ իրավունքը համարվի ճանաչված:

Հարցը առաջանում է Արցախի «Լեռնային Ղարաբաղի» ժողովրդի ինքնորոշման հետ կապված, քանի որ այն բազմիցս ճանաչվել է: Բաքուն ճանաչել է այդ իրավունքը դեռևս 1920 թվականին՝ Հայաստանում Խորհրդային իշխանության հաստատման հետ կապված Հռչակագրով¹⁴: Այնուհետև նա ճանաչել է այդ իրավունքը 1990 թվականին՝ կողմ քվեարկելով Խորհրդային միության օրենքի ընդունման ժամանակ «Սովետական միության կազմից միութենական պետության դուրս գալու հետ կապված հարցերի կարգավորման մասին»: Այս օրենքին կողմ են քվեարկել բոլոր խորհրդային պետությունները, այդ թվում՝ Խորհրդային միության իրավահաջորդը՝ Ռուսաստանի Դաշնությունը: ԱՄՆ-ը հաստատեց իր դրական վերաբերմունքը Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքի նկատմամբ 1989 թվականին, երբ Սենատի և Կոնգրեսի հատուկ բանաձևերով հորդորում էին խորհրդային իշխանությանը գտնել խնդրի որևէ լուծում, «որը իսկապես կարտացոլի այդ շրջանի ժողովրդի հայացքները»: Վերջապես 1991 թվականին, հարգելով Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքը, Հայաստանը վերանայեց այդ վեճի լուծման բանալին, երբ հռչակեց անկախություն Խորհրդային Հայաստանի սահմաններում: Այսպիսով դադարեցվեցին վերամիավորման գործողությունները՝ համաձայն ԼՂ-ի և ՀՀ-ի բարձրագույն իշխանությունների 1989 թվականի դեկտեմբերի 1-ի համատեղ վճռի:

Բայց որքան շուտ և երբ ինքնորոշումը փաստացի և օրինաչափորեն իրականանում է այս կամ այն պետության սահմաններում, մնացյալ պետությունները ազատ են իրենց որոշման մեջ, ճանաչել (այդ թվում, հնարավոր է, դիվանագիտական ճանապարհով) նորակազմ պետությանը: Գնահատումը ունի իր աստիճանավորումը. տարբերակում են դեյուրե և դեֆակտո ճանաչում, ճանաչում վերապահումներով, ազգերի ճանաչում՝ իրենց անկախության համար պայքարող, մարտնչող կողմի ճանաչում և այլն: Դեֆակտո ճանաչումը կարող է լինել ոչ միայն ֆորմալ, այլև ենթադրվող, մասնավորապես՝ արտահայտվելով երկկողմանի պայմանագրի կնքումով, օրինակ՝ երկու պետությունների

միջև բազմակողմ հարաբերություններ սահմանող առևտրատնտեսական կապերի մասին:

Ճանաչման ձևերը և աստիճանները որոշվում են իրական քաղաքականության պահանջարկով, որը հստակ դրսևորվեց, օրինակ, տարբեր պետությունների կողմից Պաղեստինի արաբական պետության ճանաչման ժամանակ:

Ներկայումս քիչ չէ խոսվում այն մասին, որ ԵՄ-ի, ՆԱՏՕ-ի, Եվրոպական համագործակցության և անվտանգության կազմակերպության և այլոց կողմից հնարավոր է ճանաչվի «ալբանացված» Կոսովոն՝ Բելգրադի կամքին հակառակ: Այդպիսի ճանաչումը կարող է դառնալ կարևոր նախադեպ, բայց ոչ թե իրավական, այլ քաղաքական:

ԱՄՆ-ի կառավարության և ԵՄ-ի որոշ պետությունների կարծիքով, իրավիճակը Կոսովոյում եզակի է և նրա ճանաչումը չպետք է հանդիսանա նախադեպ այլ ինքնահռչակ կազմությունների համար: Եվ Կոսովոյի այդ եզակիությունը հիմնավորելու համար ԱՄՆ-ի պետքարտուղար՝ Կոնդոլիզա Ռայսը նշեց հետևյալ գործոնների համակցությունը, Հարավսլավիայի փլուզման ընդհանուր կոնտեքստը, էթնիկ զտումները և հանցագործությունները Կոսովոյի քաղաքացիական բնակչության հանդեպ ու երկար ժամանակահատված երկրամասի՝ ՄԱԿ-ի ադմինիստրացիայի ղեկավարման տակ գտնվելը:

Պետք է արձանագրել, որ նախ և առաջ նախադեպը միջազգային իրավունքում չի հանդիսանում նորմաստեղծման աղբյուր, այսինքն՝ չի ստեղծում ֆորմալ համակողմանի իրավական նորմ: Եվ երկրորդ, նոր ինքնորոշվող պետությունների ճանաչումը գոյություն ունեւր նաև վաղ ժամանակներում, այդ թվում՝ հակառակ այն պետությունների, որոնցից բաժանվում էին իրենց մասերը: Այսպես, դեռ 1777 թվականին Ֆրանսիան, իսկ հետո նաև 1779-ին Իսպանիան ճանաչեցին Անգլիայից պոկված Ամերիկայի Միացյալ Նահանգները՝ կնքելով նրա հետ առևտրական և քաղաքական պայմանագրեր: Վերջապես ինչ վերաբերում է «Կոսովոյի կազուսին», ապա պետք չէ հաշվից դուրս նետել նաև այն, որ խիստ իրավականորեն փաստացի է երկրամասի ինքնորոշման օրինաչափությունը¹⁵:

Չճանաչված պետություններին երբեմն փոքր-ինչ քամահրանքով կոչում են ինքնահռչակներ: Բայց չէ որ յուրաքանչյուր պետություն սկզբնապես ինքնահռչակված պետականակերպ կազմավորում է եղել, անգամ եթե այն առաջանում է, «արտաքին» որոշումների արդյունքում (ՄԱԿ-ի Գլ-

խավոր Ասամբլեայի 1947 թվականի բանաձև Իսրայել պետության և Պաղեստինի ստեղծման մասին կամ 1995 թվականի Դեյտոնյան համաձայնագրով՝ Բոսնիայի և Հերցեգովինայի համադաշնության ստեղծումը):

«Չճանաչված», «ինքնահռչակ»... Այս սահմանումների մեջ կան անարդարության որոշ նշույլներ, արհամարհանք «հավանություն չտրվածներին» (որոշ միջազգային կազմակերպությունների կամ գերտերությունների կողմից), բայց միևնույն ժամանակ «ստուգվում» է մի ամբողջ ազգի վառ կերպով արտահայտված և ազատ կամաարտահայտման ձգտումը, որը ցանկանում է ապրել սեփական անկախ պետության մեջ: Առավել ևս, երբ խոսքը գնում է մի պետության մասին, որը գոյություն ունի և հաջող գործում է արդեն երկար ժամանակների ընթացքում:

Ի՛նչպե՞ս պետք է դրսևորի յուրաքանչյուր պետություն չճանաչված պետական կազմավորումների հանդեպ, եթե այն ձգտում է մնալ միջազգային իրավունքի սահմաններում:

Առաջին հերթին դա պետք է բխի այն բանից, որ տվյալ դեպքում նա ունի լիիրավ իրավունք ճանաչել կամ չճանաչել այդ կազմավորմանը: Իրավականորեն՝ ժողովուրդների իրավահավասարության տեսանկյունից դա ոչ միայն իրավունք է, այլև պարտավորություն, սակայն առանց պայմանի պարտավորություն: Պետությունը ինքն է վերլուծում ինքնորոշված նորակազմության պետականության իրական չափորոշիչները, որոշում հիմնավորումները, տեսակները, ճանաչման ձևերը և այլն: Գործնականում դա տեղի է ունենում սեփական շահերը, խնդիրները և իրական քաղաքականության պահանջները հաշվի առնելով:

Եվ երկրորդ, անթույլատրելի է միջամտել ինքնորոշման գործառույթին: Առավել ևս չի կարելի դիմել նոր պետության զավթմանը, իրեն միացմանը և նրա հետ միավորմանը (այդ թվում՝ դաշնության, համադաշնության, ասոցիացիայի, պրոտեկտորատի սահմաններում): Դրա հետ միասին այդ պետությունների հետ միջազգային պայմանագրի կնքումը (չհարձակման, համագործակցության, փոխադարձ օգնության և այլն) չի համարվի միջազգային իրավունքի նորմերի խախտում: Համագործակցությունը մի կողմից և տարածքային ամբողջականությունը՝ մյուս, դրանք բացառապես տարբեր բաներ են:

Ինչ վերաբերում է հատկապես Ռուսաստանին, ապա սկզբնապես նրա կողմից «չճանաչված»

պետություններին ճանաչելը նախընտրելի կլիներ իրականացվել դե ֆակտո ձևով, հնարավոր է, բազմակողմ միջպետական պայմանագրի՝ տնտեսական և առևտրային հարաբերությունների կամ հումանիտար օգնության և այլնի կնքման տեսքով: Ընդհանուր առմամբ ինչպես հստակ սահմանեց ՌԳ-ի նախագահը 2006 թվականի հոկտեմբերի 25-ի հեռուստատեսային իր ելույթում, Ռուսաստանի քաղաքականությունը, մասնավորապես, Աբխազիայի և Հարավային Օսեթիայի նկատմամբ, հիմնվում է երկու կանխադրությունների վրա. առաջին, մենք չենք կարող թույլ տալ արյունահեղություն այդ շրջանում, և երկրորդ, մենք բնավ էլ չենք ձգտում այն բանին, որպեսզի ընդարձակենք մեր տարածքը¹⁶:

Ռուսաստանի ճանաչելը «չճանաչվածներին» իրապես ներգծվում է այդ քաղաքականության մեջ: Մոսկվայի այդօրինակ մոտեցումը «չճանաչված» պետությունների հանդեպ, բացի ֆորմալ իրավունքից ունի ծանրակշիռ քաղաքական հիմքեր: Նախ և առաջ հարկավոր է ապահովել հումանիտար իրավունքը և բնակչության պահանջը, այդ թվում՝ այնտեղ գգալի թիվ կազմող Ռուսաստանի քաղաքացիություն ունեցող բնակիչների: Բացի դրանից հարկավոր էր թույլ չտալ անկայունություն իր սահմաններին կից և առավել ևս ռազմական գործողություններ ու արյունահեղություն, իսկ դրա համար պահանջվում է համագործակցություն և

շփումներ տվյալ պետության իշխող վարչակարգերի հետ: Այդուհանդերձ այդ կառավարություններն արդեն փաստորեն օրինականացրել են միջազգային ասպարեզում, համենայն դեպս մասամբ ճանաչել են որպես կողմ միջազգային բանակցություններում՝ իրենց կարգավիճակի հարցում:

Ակնհայտ է, որ կայացած ճանաչման ակտը նրան անհապաղ հաջորդող պարագաների ամբողջությամբ կտրուկ սահմանափակում է հնարավոր կանխատեսումների, սցենարների դիապազոնը և փորձագետների գնահատականը: Դեռ երկու տարի առաջ որոշ միջազգայնագետ -իրավաբաններ և քաղաքագետներ մատնացույց էին անում հավանական այլընտրանքային սցենարների մասին՝ լուծելու «կովկասյան հանգույցի» հակասությունը, որտեղ նույնպես հիշատակվում էր Աբխազիայի և Հարավային Օսեթիայի ճանաչման հավանականությունը, սակայն առանց Ռուսաստանի մասնակցության և նրա շահերին հակառակ: Իրադարձությունների սրնթաց զարգացումը՝ կապված Կովկասում «հնգօրյա պատերազմի» հետ, ծայրահեղորեն փոխեցին իրավիճակը՝ խաչ քաշելով նախկին ծրագրերի վրա և միևնույն ժամանակ բացելով «հնարավորությունների պատուհան» նորերի իրականացման, որոնց հավանականությունը դեռ երեկ թվում էր քիչ:

¹ Տե՛ս The Charter of the United Nations, <http://www.un.org/en/documents/charter/>.

² Տե՛ս International Covenant on Economic, Social and Cultural Rights, <http://www2.ohchr.org/english/law/cescr.htm>.

³ Տե՛ս Final Act of the Conference on Security and Cooperation in Europe, http://www.osce.org/documents/mcs/1975/08/4044_en.pdf.

⁴ Տե՛ս Новое время. 1992. N 31.

⁵ Տե՛ս Российская газета, 14.10.1992.

⁶ Տե՛ս Московские новости. N 39. 27.09.2002.

⁷ Տե՛ս Ключевский В.И. Сочинения. Т.1. С. 42.

⁸ Տե՛ս Старушенко Г.Б. Нация и государство в освобождающихся странах. М.,1967. С.105-106.

⁹ Տե՛ս Виген Кочарян. Право на самоопределение в современном международном праве, <http://www.regnum.ru/news/1240480.html>.

¹⁰ Տե՛ս Действующее международное право. Т. 1.-М.: Московский независимый институт международно права. 1996. С.7-33.

¹¹ Տե՛ս Декларация о принципах международного права, касающихся дружеских отношений и сотрудничества между государствами в соответствии с Уставом ООН. Принята 24.10.1970 Резолюцией 2625(XXV) на 1883-см пленарном заседании Генеральной Ассамблеи ООН.

¹² Տե՛ս Վ. Քնչարյան, Միջազգային իրավունք, Երևան, 2002:

